

ԱՆՂԵՐԵՆԻ ԱՌԱՃՆԵՐՆ ՈՒ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ
ՆՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սույն հոդվածի նպատակն է մանրամասն ուսումնասիրությունից ելնելով ներկայացնել Ա. Նազարյանի «Անգլերեն առածների և ասացվածքների» բառարանի ժամանակ ցույց տվող առածների ու ասացվածքների թարգմանչական միջոցները: Առածը կարճ էպիգրամատիկ ասացվածք է, որն արտահայտում է հանրածանոթ իմաստություն, ճշմարտություն կամ բարոյական խրատ՝ ճշգրիտ և պատկերավոր ձևով:

Առածներն ու ասացվածքները լեզվի կարևորագույն արտահայտչամիջոցներն են: Նրանք մի շարք տարբերակիչ հատկանիշներ ունեն: Շարահյուսորեն կազմված են որպես պարզ ու բարդ նախադասություններ, որոնք որոշ բարոյախոսություն են արտահայտում, խորհուրդ են տալիս, ուսուցանում են, վարվելակերպի որևէ կանոն հանձնարարում: Ինչ վերաբերում է առածների և ասացվածքների տարբերակմանը, ապա պետք է ասել, որ առածը գերազանցապես փոխաբերական-այլաբանական արտահայտություն է, որը շարահյուսորեն կազմավորված է որպես պարզ կամ բարդ նախադասություն և, ի տարբերություն ասացվածքի, գործածվում է փոխաբերական իմաստով:

Հմնտ. He that will eat the kernel must crack the nut = Ով ուզում է միջուկը ուտել, պետք է ջարդի ընկույզը:

Մինչդեռ ասացվածքը խրատական բնույթի կայուն արտահայտություն է, որը շարահյուսորեն կազմավորված է որպես պարզ կամ բարդ նախադասություն: Ի տարբերություն առածի ասացվածքը գործածվում է ուղղակի նշանակությամբ, թեև ունի ընդհանրացված իմաստ և լայն մեկնաբանման հնարավորություն է ընձեռում:

Հմնտ. Confession is good for the soul = Խոստովանությունը բուժիչ է հոգու համար:

Հաղորդակցական դարձվածաբանական միավորներ

Առածները և ասացվածքները համարվում են հաղորդակցական դարձվածաբանական միավորներ: Ժամանակակից անգլերեն լեզվում առանձնանում են ասացվածքների հետևյալ 4 կառուցվածքաիմաստային տարատեսակները.

1. *Ասացվածքներ բաղադրիչ մասերի կայուն կախվածությամբ:* Այս տարատեսակի մեջ մտնող ասացվածքները բաժանվում են.

ա/ Պատմողական նախադասություններ:

Օրինակ՝ The answer is lemon = Այս համարը չի անցնի:

բ/ Հարցական նախադասություններ: Հարցական նախադասությունների իմաստային կառուցվածքը մինչ այսօր էլ վիճելի է: Այդուհանդերձ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք հիմնականում հաստատական, ժխտական կամ հոգետորական բնույթի են, որոնք հարցի պատասխան չեն պահանջում:

Օրինակ Can the leopard change his spots? = Կարմիր կովը իր կաշին կփոխի*:

զ/ Հարկադրական նախադասությունների թիվը այնքան էլ մեծ չէ:

Օրինակ May your shadow never grow less = Ցանկանում եմ ձեզ երկար տարիների կյանք:

դ/ Բացականչական նախադասություններ:

Օրինակ Queen Ann is dead = Դա հայտնի էր նույնիսկ թագուհի Աննայի օրոք: Ամերիկա է հայտնաբերել:

ե/ Հրամայական նախադասություններ:

Օրինակ Put that in your pipe and smoke it = Ականջին օղ արեք: Լավ հիշեցեք:

2. *Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն տարբերակային կախվածությամբ:* Շատ ասացվածքներ ունեն իրենց տարբերակները: Գերակշռում են բառային տարբերակները, բայց հանդիպում են մաև քանակական, դիրքային և բառային-ձևաբանական կառուցվածք ունեցող տարբերակներ: Այս տարատեսակի առավել տարածվածը բառային-ձևաբանական կառուցվածք ունեցող տարբերակն է:

Օրինակ A lot of (much) water has flowed (flown) under the bridge (bridges) since = Շատ ջրեր են հոսել այն ժամանակվանից, երբ...:

3. *Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն-փոփոխական կախվածությամբ:* Շատ ասացվածքներում, որոնք պարունակում են one's, somebody, something դերանունները, փոփոխությունը կատարվում է հենց նրանցում:

Օրինակ One's cup is full = Համբերության բաժակը լցվել է:

4. *Ասացվածքներ՝ բաղադրիչ մասերի հաստատուն-տարբերակային-փոփոխական կախվածությամբ:* Այս կառուցվածքա-իմաստային տարատեսակի ասացվածքներում հնարավոր է երբեմն տարբերակային փոփոխություններ մտցնել:

Օրինակ One's heart came (leaped) into one's mouth = Սիրտը բերանը եկավ:

ԱՌԱՇՆԵՐԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Առածները լինում են պատմողական, հարկադրական և հարցական նախադասություններ: Առածների շարքում բացականչական նախադասություններ չեն հանդիպում:

Հաստատական նախադասություններ: Հաստատական նախադասություններում հաստատվում կամ հերքվում է ինչ-որ բան: Պարզ հաստատական նախադասություն հանդիսացող առածների թիվը մեծ չէ: Պատմողական առածներում ենթական արտահայտվում է հիմնականում գոյականով, երբեմն էլ he դերանունով: Օրինակ՝ A cat may look at a king = Աչքը մայելու համար է:

Money makes the mare (to) go = Փողն իրենն ասում է:

Հորդորական նախադասություններ: Պարզ հորդորական նախադասության օրինակ կարող են ծառայել հետևյալ առածները.

Cut your coat according to your cloth = Ոտքերդ վերմակիդ չափով մեկնիր:

Հարցական նախադասություններ: Սրանք անգլերենում շատ հազվադեպ են հանդիպում և իմաստով հիմնականում հաստատական են:

Օրինակ՝ What can you expect from a hog but a grant? = Խոզից ի՞նչ կարելի է սպասել բացի խոխոցից:

Առածների իմաստային առանձնահատկությունները

Անգլերեն առածները շատ բազմազան են իրենց բովանդակությամբ, և ընդգրկում են անգլիացիների կյանքի բոլոր կողմերը:

Առածներում հարուստներին վիրավորական գնահատական են տալիս:

Օրինակ՝ One law for the rich, and another for the poor = Օրենքը հարուստի համար է գրված, պատիժը աղքատի: Առածներում դատապարտվում է պատերազմը:

War is sweet to them that know it not = Պատերազմը չիմացողին է քաղցր:

Ծաղրի են ենթարկվում հիմարները:

A fool's bolt is soon shot = Հիմարի մոտ փողը երկար չի մնա: Զենադատվում են ծուլները, անբանները:

Idleness is the root of all evil = Անբանությունը բոլոր արատների մայրն է:

Առածները ուսուցանում են մաև աշխատասիրություն և խնայողություն:

He who would catch fish must not mind getting wet = Չուկ բռնողը ջրից չի վախենա:

Շատ առածներ օժտված են դրական գնահատականով:

Օրինակ՝ Good health is above wealth = Առողջությունը հարստությունից թանկ է: Երբեմն առածների մեջ կարող ենք հանդիպել պահպանողական մտքեր:

Spare the rod and spoil the child = Տղային չծեծողը ծունկը կծեծի:

Մեկ փոխաբերական բաղադրիչով առածներ:

Brevity is the soul of wit = Հակիրճությունը սրամտության ոգին է:

Երկու փոխաբերական բաղադրիչներով առածներ:

Faults are thick where love is thin = Այնտեղ, ուր սեր քիչ կա, շատ են սխալները:
Համեմատական առածներ:

Enough is as good as a feast = Շատ մի սիրի, ատել կա, շատ մի ատի, սիրել կա:

Առածների արտայտչական միջոցները

Անգլերենի առածներին հատուկ է լակոնիկ ոճը՝ բառերի քիչ քանակ, բայց և լայն մտքեր: Իսկ արտահայտչամիջոցների օգտագործումը թույլ է տալիս ավելի վառ արտահայտել առածի իմաստը: Անգլերենի առածների արտահայտչականությունը ապահովվում է բառային և բարեհնչունության միջոցներով:

Բառային արտահայտչամիջոցներ:

Առածների բառային արտահայտչական միջոցներից են կրկնությունները և համադրումները:

Կրկնություններ: Կրկնությունները կատարում են սաստկացնող գործառույթ, և կրկնվող բառույթները սովորաբար իրար մոտ չեն կանգնում: Կրկնվել կարող է առածի սկզբում գտնվող բառը:

Օրինակ՝ First come, first served = Ուշ եկող հյուրը ինչ գտնի, էն կուտի:

Handsome is as handsome does = Սարդուն ոչ թե խոսքով, այլ գործով են գնահատում:

Համադրումներ: Համադրումները կարելի է բաժանել երկու խմբի.

1. Հակահիշային համադրումներ, որտեղ բառերը հակահիշներ են մաս առածից դուրս:

Օրինակ՝ Who has never tasted bitter, knows not what is sweet = Դառնություն չճաշակողը քաղցրի համը չի իմանա: A good horse cannot be of a bad colour = Լավ ձին չի կարող վատ գույն ունենալ:

2. Բառերի համադրումներ, որոնք առածից դուրս հակահիշներ չեն:

Օրինակ՝ A bird in the hand is worth two in the bush = Նաղդ լինի, քիչ լինի:

What is got over the devil's back is spent under his belly = Զամուլ քերածը քամին էլ կտանի:

Բարեհնչունության միջոցներ:

Բարեհնչունության միջոցներին են պատկանում հանգավորումը, ալիտերացիան և ասոնանսը /մանածայնություն/: Սրանք համարվում են

կարևոր արտահայտչամիջոցներ, քանի որ նպաստում են առածների հաստատուն և ավելի հեշտ հիշվող լինելուն:

Օրինակ As you sow, you shall mow = Ինչ ցանես, այն էլ կհնձես:

Words cut more than swords = Թրի կտրածը կլավանա,

լեզվինը ոչ:

Ալիտերացիա: Անգլերեն առածներում գոյություն ունեն ալիտերացիայի տարբեր ձևեր:

ա/ բաղաձայնի կրկնությունը առաջին և վերջին բառերում:

Օրինակ՝ Barking dogs seldom bite = Հաչան շուներ չի կծում:

Let sleeping dogs lie = Քնած շանը քար մի գցիր:

բ/ Բաղաձայնի կրկնությունը երկրորդ և վերջին բառերում:

Օրինակ՝ Every bullet has its billet = Ճակատագրից փախչել չես

կարող:

One swallow doesn't make summer = Մի ծաղկով գարուն չի գա:

գ/ Երկու կամ երեք բաղաձայների կրկնություն տարբեր բառերում:

Օրինակ՝ Dumb dogs are dangerous = Վախեցիր մարմանդ գետից:

Faint heart never won fair lady = Խիզախությունը

բաղաքներ է նվաճում:

Անգլերեն առածների մեծամասնությունը կարճ և կտրուկ ձևով է արտահայտված: Երբեմն կարող ենք հանդիպել նաև երկար առածների, որոնք հակված են հնանա լու, նամանավանդ, երբ բաղկացած են տասից ավելի բառերից:

Ասացվածքների արտահայտչական միջոցներից է համարվում միայն ալիտերացիան:

Օրինակ՝ Put that in your pipe and smoke it = Ականջիդ օղ արա:

Այսպիսով, արտահայտչական միջոցները ավելի վառ և արտահայտիչ են դարձնում անգլերեն առածներն ու ասացվածքները և նպաստում են արտահայտելու ժողովրդական իմաստությունը:

Առածների և ասացվածքների թարգմանչական միջոցները

Հարկ է նշել, որ թարգմանությունը մի լեզվի բանավոր կամ գրավոր տեքստի վերարտադրությունն է մի այլ լեզվի միջոցներով: Թարգմանության մասին գիտությունը կոչվում է թարգմանաբանություն: Գրավոր լեզուների ստեղծմամբ, սկսած անտիկ դարաշրջանից, լայն թափ է ստանում գրական, պատմական, փիլիսոփայական և այլ ստեղծագործությունների թարգմանությունը, որն էլ դառնում է տարբեր ազգերի մշակույթների մերժեցման ու փոխազդեցության հզոր խթան:

Ա. Նազարյանի հինգ հարյուր առածներն ու ասացվածքները թարգմանվել են հետևյալ եղանակներով՝ բառացի թարգմանություն, առածային համաբանության միջոցով կատարվող թարգմանություն, միջլեզվական զուգահեռ համարժեքներով թարգմանություն, նկարագրական թարգմանություն:

Բառացի թարգմանությունը սովորաբար բնորոշվում է որպես մի լեզվի բառերի մեխանիկական փոխարինումը մի ուրիշ լեզվի բառային համարժեքներով՝ թարգմանող լեզվում բնագրի կառուցվածքը պահպանելով համոզե՞ծ:

Թարգմանության մյուս կարևոր հասկացությունը համարժեքությունն է և համապատասխանաբար համարժեքը:

Ըստ Յու. Ի. Ռեցկերի համարժեքները ելակետային և թարգմանության տեքստերի միավորների միջև մշտական նույնանշանակ համապատասխանություններ են, որոնք կոնտեքստից կախված չեն:

Համարժեքների միջոցով թարգմանությունը սովորաբար հակադրվում է նկարագրական թարգմանությանը: Նկարագրական թարգմանությունը լեզվում որևէ բառի կամ բառակապակցության բովանդակության վերարտադրությունն է ավելի ծավալուն ձևով, բառերի ավելի մեծ քանակությամբ: Նկարագրական կերպով առավել հաճախ թարգմանվում են անհամարժեք բառերը, որոնք արտահայտում են ազգային իրականություններ:

Առածի կամ ասացվածքի համարժեք է կոչվում այն միավորը, որը լիովին համապատասխանում է իմաստով անգլերեն որևէ առածին կամ ասացվածքին և հիմնված է միևնույն պատկերների վրա:

Այսպիսով, միջլեզվական զուգահեռ համարժեքի միջոցով հայերեն թարգմանված առածներն ու ասացվածքները համընկնում են իրենց ներքին ձևով, իսկ երբեմն էլ քերականական և շարահյուսական կառուցվածքով:

Օրինակ After us the deluge = Ինձնից հետո թեկուզ ջրհեղեղ:

Appetite comes with eating = Ախորժակն ուտելիս է բացվում:

Better late than never = Լավ է ուշ, քան երբեք:

Ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ շատ անգլերեն առածներ և ասացվածքներ հայերենում երկու և նույնիսկ ավելի միջլեզվական համարժեքներ ունեն: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ հայոց լեզուն հարուստ է առածներով և ասացվածքներով և ունակ է պատկերավորություն հաղորդել թարգմանված միավորին՝ առաջարկելով մեկից ավելի համարժեքներ:

Օրինակ Strike while the iron is hot = 1. երկաթը տաք-տաք են ծեծում:
2. Թունդիրը տաք-տաք հացը կող կտան: 3. Էսօրվա բանը վաղվան չեն թողնի:

Time is a great healer = 1. Ժամանակը բժիշկ է:

2. Ժամանակը վերքեր կբուծի: 3. Ժամանակը ամեն ինչ կմոռացնի:

Առածների և ասացվածների թարգմանության մյուս միջոցը հանդիսանում է առածային համաբանությունը: Այս դեպքում գործ ունենք այնպիսի դարձվածաբանական միավորների հետ, որոնք իմաստով համանման են անգլերենի, բայց ունեն այլ ներքին ձև, այսինքն այլ պատկերով հիմք:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ա. Նազարյանի բառարանի 500 դարձվածաբանական միավորներից 238-ը թարգմանված են առածային համաբանության միջոցով: Սա կարելի է բացատրել այն փաստով, որ պատկերավոր դարձվածաբանական միավորների թիվը, որոնք համընկնում են իրենց իմաստով և պատկերավորությամբ, համեմատաբար փոքր է:

Այսպիսով, շատ հաճախ թարգմանիչը ստիպված է լինում օգտագործել այնպիսի հայերեն դարձվածք, որն իմաստով համանման է անգլերենին, բայց լիովին տարբերվում են ներքին ձևով, այսինքն պատկերավոր հիմքով:

Առածային համաբանության միջոցով թարգմանված միևնույն անգլերեն առածը կամ ասացվածքը կարելի է թարգմանել հայերեն 2 կամ ավելի կորելատիվ առածային համարժեքների միջոցով:

- Օրինակ ...1. Երկու թագավոր մի խալիչի վրա չեն տեղավորվի:
2. Երկու փահլևան մի փողոցում չեն լինում:

... 1. Ուշ արի, ճուշ արի: 2. Սնկոչ հյուրը չնից էլ վատ է:

Այսպիսով, թարգմանչին հնարավորություն է տրվում ընտրել այս տարբերակներից այն մեկը, որն ավելի շատ կհամապատասխանի տրված կոնտեքստին:

Այժմ անդրադառնանք այն առածներին ու ասացվածներին, որոնք տրված բառարանում թարգմանված են բառացի թարգմանությամբ, կամ, ինչպես Ա. Նազարյանն է կոչում, դիպվածային պատճենման միջոցով:

Այն դեպքերում, երբ բառարանագետին չի հաջողվում թարգմանել որևէ առած կամ ասացվածք վերը նշված թարգմանչական հնարների միջոցով, նա ստիպված է լինում դիմել բառացի թարգմանությանը:

Օրինակ When three know it , all know it = Երբ մի բան երեք հոգու հայտնի է, այն բոլորին հայտնի կլինի:

Who has never tasted bitter knows not what is sweet = Ով դառը երբեք չի ճանաչել, չգիտե, թե ինչ է քաղցրը:

Բառացի թարգմանությունը մի լեզվի բառերի մեխանիկական փոխարինումն է մի ուրիշ լեզվի բառային համարժեքներով թարգմանող լեզվում բնագրի կառուցվածքը /ամբողջությամբ կամ մասնակի/ պահպանելով հանդերձ: Բառացի թարգմանությունը ճշգրիտ կերպով վերարտադրում է ոչ միայն բնագրի իմաստային բովանդակությունը, նրա ոճական, գործաբանական արժեքը, այլև նրա քերականական, շարահյուսական կառուցվածքը դրանով

իսկ ապահովելով բարգմանության համարժեքությունը: Բառացի բարգմանության տերմինը չպետք է չափազանց «բառացի» ընկալել և համարել, որ այն միշտ ենթադրում է բարգմանության տեքստի բացարձակ կառուցվածքաքերականական, այդ թվում շարահյուսական համապատասխանություն ելակետային տեքստին: Հավանաբար դրանով է բացատրվում այն փաստը, որ մոտավորապես 405 առածներ ու ասացվածներ բարգմանվել են բառացի բարգմանության միջոցով:

Ա. Նազարյանը քննվող դարձվածաբանական միավորների մեկ այլ միջոց է առաջարկում, որը կայանում է առածը ասացվածքի, իսկ ասացվածքն էլ առածի միջոցով բարգմանելու մեջ: Չնայած այսպիսի բարգմանությունների թիվը շատ մեծ չէ, հարկ ենք համարում նշել, որ նրանք բավականին մեծ հետաքրքրություն են առաջացնում. հետևյալ օրինակներում անգլերեն առածը բարգմանված է հայերեն ասացվածքի միջոցով.

The last drop makes the cup over = Համբերությունն էլ չափ ունի:

Better an egg today than a hen tomorrow = Նաղդ լինի, քիչ լինի:

Թարգմանական պրակտիկայում լայնորեն կիրառվող միջոցներից մեկն էլ նկարագրական բարգմանությունն է: Եթե որևէ առած կամ ասացվածք չունի հայերենում ոչ զուգահեռ համարժեք, ոչ համաբանություն, իսկ դիպվածային պատճենմամբ բարգմանությունը կարող է քիչ հասկանալի լինել. բարգմանիչը ստիպված է լինում հրաժարվել պատկերավորությունը հաղորդելուց և օգտագործել նկարագրական բարգմանություն, այսինքն առածի կամ ասացվածքի իմաստը հաղորդել ազատ /փոփոխում/ նախադասության կամ անհատական-հեղինակային արտահայտությամբ:

Ազատ բարգմանություն ասելով հասկանում ենք բարգմանող լեզվում որևէ բառի կամ բառակապակցության վերարտադրությունը ավելի ծավալուն ձևով բառերի ավելի մեծ քանակությամբ: Նկարագրական ձևով առավել հաճախ բարգմանվում է անհամարժեք բառերը, որոնք արտահայտում են ազգային իրականություններ:

Նկարագրական բարգմանությունը, ի տարբերություն համարժեքայինի, ենթադրում է բարգմանվող լեզվական միավորի բացատրություն, ինչը հաճախ կատարվում է համարժեքներին ոչ բնորոշ բառերի ստորոգական կապակցությամբ, կամ դերբայական կառուցվածք ունեցող բառակապակցությամբ: Ա. Նազարյանի բառարանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընդամենը 188 առածներ ու ասացվածներ են բարգմանվել նկարագրական բարգմանությամբ: Այս փաստը զալիս է ապացուցելու, որ նկարագրական բարգմանությամբ բարգմանված միավորների թիվը համեմատաբար փոքր է:

Հարկ է նշել, որ ազատ բառակապակցությունները, որոնց միջոցով համապատասխան առածներն ու ասացվածները թարգմանվել են, մայրենի լեզվում չունեն կայուն լեզվական միավորների կարգավիճակ:

Օրինակ՝ Home is home though it be never so homely = Հարազատ տնից լավ տեղ չկա, անգամ եթե այն բավականաչափ հարմարավետ չէ:

Rome was not built in a day = Միանգամից ոչինչ չի կարելի անել, ամեն ինչի համար ժամանակ է հարկավոր:

Երբեմն առածների և ասացվածքների թարգմանության ժամանակ հնարավոր են կոնտեքստային փոխարինումներ: Երբ թարգմանիչը ցանկանում է ճշգրիտ ձևով վերարտադրել առածի ոչ միայն իմաստային կողմը, այլ նաև ոճական երանգը և չունի ոչ համաժեք, ոչ համաբանություն, դիմում է կոնտեքստային փոխարինմանը:

Օրինակ՝ You can't eat your cake and have it = Չի կարելի իրար բացառող երկու բան անել:

Այս անգլերեն ասացվածքը՝ չունի իր հայերեն համարժեքը և սովորաբար թարգմանվում է կոնտեքստային փոխարինման միջոցով: Մասնավորապես առածներն ու ասացվածքները թարգմանելիս շատ կարևոր է հաշվի առնել նրանց ոճական կողմը և ազգային բնույթը:

Այսպիսով, ըստ իրենց ազգային բնույթի առածներն ու ասացվածքները բաժանվում են երեք խմբի. 1. միջազգային, օրինակ Do in Rome as the Romans do. 2. չեզոք, օրինակ Strike the iron while it's hot. 3. ազգային, օրինակ Do not carry coals to Newcastle.

Այսպիսով, Ա. Նազարյանը բառարանի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 500 առածներն ու ասացվածքները թարգմանելիս բառարանագետին հաջողվել է ընտրել ամենահամապատասխան թարգմանչական միջոցները հատուկ ուշադրություն դարձնելով նաև նրանց ազգային երանգավորմանը:

Այսպիսով, հողվածի վերաբերյալ եզրակացությունները հետևյալն են.

1. Առածները և ասացվածքները լեզվի կարևորագույն արտահայտչական միջոցներն են: Շարահյուսորեն կազմավորված են որպես պարզ ու բարդ նախադասություններ, որոնք որոշ բարոյախոսություն են արտահայտում, խորհուրդ են տալիս, ուսուցանում են, վարվելակերպի որևէ կանոն հանձնարարում: Առածներն ու ասացվածքները ընդհանրություններ ունեն կայուն բառակապակցությունների հետ, քանի որ նրանց բառային միավորները նույնպես կայուն են, նրանց երկուսի իմաստն էլ ավանդական է և պատկերավոր:
2. Ժամանակակից անգլերեն լեզվում առանձնանում են ասացվածքների քերականական հետևյալ 4 կառուցվածքախմաստային տարատեսակները.

- a. Ասացվածքներ բաղադրիչ մասերի կայուն կախվածությամբ: Այս տարատեսակի մեջ մտնող ասացվածքները բաժանվում են պատմողական, հարցական, հարկադրական, բացականչական և հրամայական նախադասությունների
- b. Ասացվածքներ բաղադրիչ մասերի հաստատուն-տարբերակային կախվածությամբ:
- c. Ասացվածքներ բաղադրիչ մասերի հաստատուն-փոփոխական կախվածությամբ:
- d. Ասացվածքներ բաղադրիչ մասերի հաստատուն-տարբերակային-փոփոխական կախվածությամբ:

Ըստ քերականական կառուցվածքի առածները լինում են պատմողական, հարկադրական և հարցական նախադասություններ: Առածների շարքում բացականչական նախադասություններ չեն հանդիպում:

3. Անգլերեն առածները շատ բազմազան են իրենց իմաստով և ընդգրկում են անգլիացիների կյանքի բոլոր կողմերը:
4. Ժամանակակից անգլերեն լեզվի առածների և ասացվածքների թարգմանչական միջոցներից են համարվում միջլեզվական զուգահեռ համարժեքների միջոցով կատարվող թարգմանությունը, առածային համաբանությունը, բառացի թարգմանությունը, նկարագրական և հակամիջային թարգմանությունները:

Գրականություն

1. Арнольд Н.Н. ,Основы английской фразеологии, Изд. ЛГУ, 1963.
2. Комиссаров В. Н., Рецкер Я. И., Тархов В. И. Пособие по переводу с английского на русский, ч.1, М., 1960.
3. Комиссаров В. Н., Коралова А. Л., Практикум по переводу с английского на русский, М., Высш. Шк., 1990.
4. Кунин А. В., Английская фразеология, Москва, 1970.
5. Кунин А. В., Фразеология современного английского языка, М., 1970.
6. Левицкая Т. Р., Фитерман, А. М., Проблемы перевода, М., 1976.
7. Федоров А. В., Основы общей теории перевода, М., 1968.
8. Arnold I. V. ,The English Words, М., 1973.
9. Nazaryan A. H. Illustrated dictionary of English proverbs and sayings (with Russian and Armenian translations and equivalents), Yerevan 1999
10. Ա. Հ. Նազարյան «Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ», «Ամարաս», Երևան, 2000: